ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք. Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ-3-Ե- 2898

«11» ապրիլի 2022թ.

«ԼԱՎԵՆԴԵՐ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ՇԱՀԶԱԴՅԱՆԻՆ,
«ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Կ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ,
«Արեգ-Արիան» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ,
«Մեծ Ծիածան» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Գ. ԵՍԱՅԱՆԻՆ,
«ԷՆԱ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Է. ՍԱՐԴԱՐՅԱՆԻՆ,
«Տոդոս-Ակա» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ԴՈԽՈՅԱՆԻՆ,
Ռուզաննա Մինասյան Վաղինակի Ա/Ձ-ին

Սույնով ծանուցվում է, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգով Դատական դեպարտամենտի կարիքների համար կենցաղային և տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2022թ. մարտի 30-ի որոշմամբ 2-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով «ԼԱՎԵՆԴԵՐ» ՍՊԸ-ն, 3-րդ, 9-րդ և 15-րդ չափաբաժինների մասով «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ-ն, 4-րդ, 5-րդ և 11-րդ չափաբաժինների մասով «Արեգ-Արիան» ՍՊԸ-ն, 8-րդ չափաբաժնի մասով «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն, 10-րդ չափաբաժնի մասով «ԷՆԱ» ՍՊԸ-ն, 12-րդ և 14-րդ չափաբաժինների մասով «Տոդոս-Ակա» ՍՊԸ-ն, 13-րդ չափաբաժնի մասով Ռուզաննա Մինասյան Վաղինակի Ա/Ձ-ն հայտարարվել են ընթացակարգի ընտրված մասնակիցներ:

Ընթացակարգի 2-րդ-15-րդ չափաբաժինների մասով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, eauction.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) կողմից սահմանվել է անգործության ժամկետ՝ մինչև 2022թ. ապրիլի 9-ը ներառյալ: Հիշյալ անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկել պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Տեղեկացվում է, որ կնքվելիք պայմանագրի նախագիծը ներկայացվում է Համակարգի միջոցով և առաջարկվում՝ սույն ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված պայմանագիրը կցել Համակարգ, իսկ որակավորման և պայմանագրի ապահովումների բնօրինակները պատվիրատուին ուղղված ուղեկցող գրությամբ ներկայացնել Դատական դեպարտամենտ (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են Ձեր կողմից միակողմանի հաստատված հայտարարությունների՝ տուժանքների («ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/10» ծածկագրով ընթացակարգի հրավերով ներկայացված օրինակելի ձևերին /համապատասխանաբար Հավելված 3.2, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900008000664 և Հավելված 4.1, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900005000758/ համապատասխան) կամ կանխիկ փողի ձևով (Կանխիկ փողի ձևով ներկայացված որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին, իսկ պայմանագրի ապահովումը՝ «900008000664» գանձապետական հաշվին):

Որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի 15 տոկոսին, իսկ պայմանագրի ապահովման չափը կազմում է կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը:

Վերոնշյալ ժամկետում անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ԽԱՉԻԿ ԽԱՉԱՐՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/10» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Դ. Թովմասյան
Հեռ.՝ /+37410/ 511-792, 511-788